ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթերթում: Պատասխանների ձևաթերթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Ե՞րբ է տեղի ունեցել Քերոնեայի ճակատամարտը մակեդոնական և հունական բանակների միջև:

1) Ք.ա. 338թ.
2) Ք.ա. 337թ.
3) Ք.ա. 336թ.
4) Ք.ա. 339թ.

2 Ե՞րբ է կառավարել կայսր Դիոկղետիանոսը:

1) 284-325թթ.
2) 280-305թթ.
3) 284-315թթ.
4) 284-305թթ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել խաչակրաց երկրորդ արշավանքը:

1) 1096-1099թթ.
2) 1147-1149թթ.
3) 1189-1192թթ.
4) 1202-1204թթ.

4 Ե՞րբ է ձևավորվել Հռոմի պապի աշխարհիկ պետությունը Միջին Իտալիայում:

1) 776թ.
2) 806թ.
3) 786թ.
4) 756թ.

5 Ե՞րբ է Վիլհելմ Օրանցին հռչակվել Անգլիայի թագավոր:

1) 1689թ.
2) 1679թ.
3) 1688թ.
4) 1690թ.

6 Ե՞րբ է Իտալիան դուրս եկել Ազգերի լիգայից:

1) 1933թ.
2) 1936թ.
3) 1940թ.
4) 1937թ.

**7** **Ե՞րբ է տեղի ունեցել Թեհրանի խորհրդաժողովը:**

1) 1945թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը
2) 1944թ. հունիսի 6-ից հուլիսի 12-ը
3) 1943թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը
4) 1945թ. սեպտեմբերի 17-22-ը

**8** **Միջագետքի ո՞ր քաղաքում է կառուցվել առաջին զիկկուրատը:**

1) Լուքսորում
2) Ուրուկում
3) Ուրում
4) Բաբելոնում

**9** **Ասորեստանյան ո՞ր արքան Ք.ա. 729թ. գրավեց Բաբելոնը՝ հռչակվելով բաբելոնյան թագավոր:**

1) Թիգլաթպալասար III-ը
2) Սարգոն II-ը
3) Աշուրնածիրպալ II-ը
4) Սալմանասար III-ը

**10** **Ե՞րբ է Հռոմը գրավվել վեստգոթերի կողմից:**

1) 451թ.
2) 410թ.
3) 420թ.
4) 433թ.

**11** **Եվրոպական ո՞ր պետություններն են առաջինը ստեղծել գաղութային կայսրություններ:**

1) Ավստրիան, Իտալիան
2) Անգլիան,Ֆրանսիան
3) Հոլանդիան,Գերմանիան
4) Պորտուգալիան, Իսպանիան

**12** **Ինչպե՞ս վերանվանվեց անգլիական թորի կուսակցությունը XIX դարի 50-70-ական թթ:**

1) պահպանողական
2) շովինիստական
3) ազատական
4) սոցիալիստական

**13** **Որտե՞ղ է տեղի ունեցել Գերմանական կայսրության հռչակումը:**

1) Վերսալում
2) Վիեննայում
3) Փարիզում
4) Բեռլինում

**14** **Ինչպե՞ս կոչվեց 2004 թ. հեղափոխությունը Ուկրաինայում:**

1) «Սպիտակ հեղափոխություն»
2) «Վարդերի հեղափոխություն»
3) «Կակաչների հեղափոխություն»
4) «Նարնջագույն հեղափոխություն»

**15** **Ի՞նչ է «պրինցիպատը»:**

1) Վաղ կայսրության ժամանակահատվածը Հռոմի պատմության մեջ
2) Հուլիոս Կեսարի անձնական կառավարման շրջանը
3) Ուշ կայսրության ժամանակահատվածը Հռոմի պատմության մեջ
4) Դիոկղետիանոսի կողմից հիմնված կառավարման նոր եղանակը

**16** **Ի՞նչ է համաշխարհայնացումը (գլոբալացում):**

1) արդյունաբերության գերակշռող դերի հաստատման գործընթաց
2) արվեստի ավանգարդիստական ուղղություն
3) նոր համաշխարհային պատերազմի առաջացման վտանգ
4) աշխարհի ամբողջական համակարգված միասնականացման գործընթաց

**17** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. հոների պարտությունը Կատալաունյան դաշտի ճակատամարտում
բ. Կայսր Մարկոս Ավրելիոսի կառավարման ավարտը
գ. Վաղես կայսեր զոհվելը Ադրիանապոլսի ճակատամարտում
դ. Հռոմեական կայսրության բաժանումը կայսր Թեոդոսիոսի կողմից

1) դ, բ, գ, ա
2) բ, գ, դ, ա
3) բ, գ, ա, դ
4) գ, ա, բ, դ

**18** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Հռոմի պապի աշխարհիկ պետության առաջացումը
բ. Անգլիայի արքա Հովհան Անհողինի գահակալման սկիզբը
գ. Յարմուկ գետի ճակատամարտն արաբների և բյուզանդացիների միջև
դ. Օտտոն I-ի կայսր հռչակվելը

1) բ, ա, գ, դ
2) գ, դ, բ, ա
3) գ, ա, դ, բ
4) ա, դ, բ, գ

**19** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Գերմանական կայսրության հռչակումը
բ. Ընտրական առաջին բարեփոխումներն Անգլիայում
գ. Երկրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
դ. Ավստրո-Հունգարիայի Սահմանադրության ընդունումը

1) բ, դ, գ, ա
2) բ, գ, դ, ա
3) բ, դ, ա, գ
4) ա, դ, գ, բ

**20** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Ճակատամարտը Մառն և Էն գետերի շրջանում
բ. Մուդրոսի զինադադարը
գ. Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը
դ. Նիկոլայ II-ի հրաժարականը

1) գ, ա, դ, բ
2) գ, դ, բ, ա
3) ա, բ, գ, դ
4) բ, ա, դ, գ

**21** **Ե՞րբ են կատարվել Սոլոնի բարեփոխումները:**

1) Ք.ա. 528թ.
2) Ք.ա. 564թ.
3) Ք.ա. 594թ.
4) Ք.ա. 508թ.

**22** **Ե՞րբ է տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու պառակտումը:**

1) 1055թ.
2) 1054թ.
3) 1045թ.
4) 1052թ.

**23** **Ե՞րբ է Ռուսաստանում հաստատվել Ռոմանովների արքայատոհմը:**

1) 1609թ.
2) 1602թ.
3) 1613թ.
4) 1612թ.

**24** **Ե՞րբ է Հենրիխ IV-ը հրապարակել Նանտի էդիկտը:**

1) 1598թ.
2) 1572թ.
3) 1588թ.
4) 1594թ.

**25** **Ե՞րբ են հրապարակվել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի «14 կետերը»:**

1) 1920թ.
2) 1921թ.
3) 1922թ.
4) 1918թ.

**26** **Ո՞վ էր հունական նոր դիցարանի գլխավոր աստվածը:**

1) Զևսը
2) Քրոնոսը
3) Ուրանոսը
4) Պոսեյդոնը

**27** **Ո՞վ էր խաչակիրների կողմից ստեղծված Երուսաղեմի թագավորության առաջին թագավորը:**

1) Լյուդովիկոս Բարեպաշտը
2) Ռիչարդ I Առյուծասիրտը
3) Գոտֆրիդ Բուլյոնցին
4) Ֆրիդրիխ I Շիկամորուսը

**28** **Ո՞ր օսմանյան կառավարիչն է առաջինը ընդունել սուլթանի տիտղոս:**

1) Մուրադ I-ը
2) Օսման բեյը
3) Մահմեդ I-ը
4) Օրհան բեյը

**29** **Ո՞վ է Պետրոս Աբելյարը:**

1) միջնադարյան նշանավոր ճանապարհորդ
2) միջնադարյան նշանավոր գրող
3) միջնադարյան նշանավոր սքոլաստ
4) միջնադարյան նշանավոր նկարիչ

**30** **ԱՄՆ-ի ո՞ր նախագահի օրոք վերացվեց ստրկությունը:**

1) Թոմաս Ջեֆերսոնի
2) Թեոդոր Ռուզվելտի
3) Ջորջ Վաշինգտոնի
4) Աբրահամ Լինկոլնի

**31** **Ի՞նչ հետևանքներ ունեցավ Ք. ա. 197թ. Կինոսկեֆալեի ճակատամարտը:**

1) Գալլերը վտարվեցին Հյուսիսային Իտալիայից:
2) Հռոմը գրավվեց և ավերվեց գալլերի կողմից:
3) Մակեդոնիան հրաժարվեց իր բոլոր նվաճումներից:
4) Հունաստանը ճանաչեց Հռոմի գերիշխանությունը:

**32** **Ի՞նչ հետևանք ունեցավ ռեֆորմացիոն շարժումը Ֆրանսիայում:**

1) Ֆրանսիան կորցրեց իր անկախությունը և մասնատվեց Անգլիայի ու Իսպանիայի միջև:
2) Ռեֆորմացիոն շարժումը վերաճեց երկարատև քաղաքացիական կռիվների:
3) Ֆրանսիայի պետական կրոն հռչակվեց կալվինականությունը:
4) Ֆրանսիայում ձևավորվեց ինքնուրույն պետական եկեղեցի:

**33** **Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Էխնաթոն
բ. Շամշի-Ադդու
գ. Ռամզես II
դ. Համմուրապի
ե. Թութմոս I

1) բ, ա, դ, ե, գ
2) ե, գ, բ, ա, դ
3) բ, դ, ե, ա, գ
4) դ, ա, գ, ե, բ

**34** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Ակրայի գրավումը մահմեդականների կողմից
բ. Երրորդ խաչակրաց արշավանքի ավարտը
գ. Խաչակիրների կողմից Երուսաղեմի գրավումը
դ. Եդեսիայի նվաճումը Մոսուլի կառավարիչ Զանգիի կողմից
ե. Զադար քաղաքի գրավումը խաչակրաց չորրորդ արշավանքի ընթացքում

1) գ, բ, ա, դ, ե
2) բ, գ, դ, ե, ա
3) ա, գ, ե, դ, բ
4) գ, դ, բ, ե, ա

**35** **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Բայց, այնուամենայնիվ, Երկիրը պտտվում է».**

1) Գալիլեյը
2) Բեկոնը
3) Կոպեռնիկոսը
4) Բրունոն

36 **Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը. «Նպատակն արդարացնում է միջոցները»:**

1) Թոմաս Մորը
2) Նիկոլո Մաքիավելին
3) Էրազմ Ռոտերդամցին
4) Ֆրանսուա Ռաբլեն

37 **Պատմական գործչի անունը համապատասխանեցնել կառավարման տարեթվերի հետ:**

| | |
|---|---|
| 1. Ալեքսանդր I | ա. 1762-1796թթ. |
| 2. Եկատերինա II | բ. 1855-1881թթ. |
| 3. Պետրոս(Պյոտր) I | գ. 1801-1825թթ. |
| 4. Նիկոլայ I | դ. 1682-1725թթ. |
| | ե. 1825-1855թթ. |

1) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
3) 1-ա, 2-գ, 3-ե, 4- բ
4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե

38 **Աշակույթի գործիչներին համապատասխանեցնել այն երկրների հետ, որտեղ նրանք ստեղծագործել են:**

| | |
|---|---|
| 1. Օ. Լունդստրեմ | ա. Գերմանիա |
| 2. Ի. Մոնտան | բ. Իտալիա |
| 3. Դ. Սիկեյրոս | գ. Մեքսիկա |
| 4. Լ. Վիսկոնտի | դ. Ֆրանսիա |
| 5. Հ. Հաուպտման | ե. ԽՍՀՄ |
| | զ. Նորվեգիա |

1) 1-ա, 2-դ, 3-զ, 4-ե, 5-գ
2) 1-ե, 2-բ, 3-գ, 4-ա, 5-դ
3) 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ, 5-ա
4) 1-զ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե

39 **Ո՞վ էր ռեֆորմիացիոն շարժման ղեկավարը Շվեյցարիայում:**

1) Պիեռ Վալդոն
2) Մարտին Լյութերը
3) Ժան Կալվինը
4) Հենրիխ Բուրբոնը

40 **Ո՞ր քաղաքում է կայացել հիտլերյան հանցագործների դատավարությունը:**

1) Մյունխենում
2) Բեռլինում
3) Պոտսդամում
4) Նյուրնբերգում

41 **Ո՞րն է 1799 թ. Ֆրանսիայում տեղի ունեցած պետական հեղաշրջման գլխավոր հետևանքը:**

1) Գործադիր իշխանությունը կենտրոնացավ Դիրեկտորիայի ձեռքում:
2) Ֆրանսիական գահին վերահաստատվեցին Բուրբոնները՝վերականգնելով միապետությունը:
3) Ամրապնդվեց Նապոլեոն Բոնապարտի անձնական իշխանությունը:
4) Ֆրանսիան հռչակվեց հանրապետություն:

42 **Ո՞րն էր «Հակակոմինտերնյան պակտի» հիմնական նպատակը:**

1) Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը
2) Հակահիտլերյան կոալիցիայի փլուզումը
3) Ագրեսորներին «խաղաղեցնելու» քաղաքականությունը
4) Համատեղ պայքարը Կոմունիստական ինտերնացիոնալի դեմ

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Պունիկյան պատերազմների ավարտը
բ. Անտիոքոս III-ի բանակի մուտքը Հունաստան
գ. Հռոմի գրավումը Սուլլայի կողմից
դ. Գրանիկոսի ճակատամարտը
ե. Մակեդոնիայի արքա Պերսևսի պարտությունը Հռոմի բանակից

1) գ, ա, բ, ե, դ
2) բ, ա, դ, ե, գ
3) դ, ա, բ, ե, գ
4) ա, գ, ե, դ, բ

44 **Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Հենրիխ I
բ. Լոթար
գ. Գոթֆրիդ Բուլյոնցի
դ. Բարսեղ(Վասիլ) II
ե. Յարոսլավ Իմաստուն

1) ե, բ, գ, դ, ա
2) բ, ա, դ, ե, գ
3) ա, գ, բ, ե, դ
4) գ, ա, բ, դ, ե

**45** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. ԱՊՀ-ի կանոնադրության ընդունումը
բ. Շարլ դը Գոլի հեռանալը քաղաքական ասպարեզից
գ. Էլիզաբեթ II-ի գահակալման սկիզբը
դ. Մ. Թետչերի առաջին անգամ վարչապետի պաշտոն ստանձնելը
ե. Ջ. Քենեդու նախագահ ընտրվելը

1) դ, գ, ա, բ, ե
2) բ, ե, գ, դ, ա
3) գ, ե, բ, դ, ա
4) դ, ա, ե, գ, բ

**46** **Կատարել համապատասխանեցում:**

1. Մինա
2. Թուկուլթի-Նինուրտա I
3. Կարիգալզու
4. Լաբարնա I

ա. Աքքադի արքա
բ. Կուսսար քաղաքի տիրակալ
գ. Եգիպտոսի արքա
դ. Ասորեստանի արքա
ե. Կասիտների արքա

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ
2) 1-ա, 2- ե, 3- գ, 4-դ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե

**47** **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի հետ:**

1. «Արևի քաղաքը»
2. «Աստվածային կատակերգություն»
3. «Աստվածաբանության հանրագումար»
4. «Ուտոպիա»

ա. Թովմա Աքվինացի
բ. Թոմաս Մոր
գ. Կամպանելա
դ. Ջովաննի Բոկաչչո
ե. Դանթե Ալիգիերի

1) 1-դ, 2-գ, 3-ե, 4-ա
2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե
3) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ
4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ

48 **Կատարել համապատասխանեցում:**

1. Հռոմի պապի աշխարհիկ իշխանության վերացումը
2. Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրության վերացումը
3. Մեծ Բրիտանիա անվան առաջին կիրառումը
4. Առաջին կայսրության հաստատումը Ֆրանսիայում

ա. 1707թ.
բ. 1804թ.
գ. 1871թ.
դ. 1806թ.
ե. 1815թ.

1) 1- բ, 2-գ, 3-ե, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4- բ
3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-ե
4) 1-ե, 2- բ, 3-դ, 4-ա

49 **Պետական գործիչներին համապատասխանեցնել իրենց պաշտոնների հետ:**

1. Սայոնջի
2. Օռլանդո
3. Վիլսոն
4. Կլեմանսո

ա. Իտալիայի վարչապետ
բ. ԱՄՆ-ի նախագահ
գ. Ճապոնիայի վարչապետ
դ. Ֆրանսիայի վարչապետ
ե. Մեծ Բրիտանիայի վարչապետ

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ
3) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա
4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ

50 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ:**

1. Ճապոնիայի միանալը գերմանա-իտալական դաշինքին
2. Աղիս Աբեբայի գրավումը իտալական բանակի կողմից
3. Դանիայի և Նորվեգիայի գրավումը Գերմանիայի կողմից
4. Ճապոնիայի ագրեսիան Մոնղոլիայի դեմ
5. Գերմանիայի նախագահ Հինդենբուրգի մահը

ա. 1936թ.
բ. 1934թ.
գ. 1935թ.
դ. 1939թ.
ե. 1944թ.
զ. 1940թ.

1) 1-զ, 2-ա, 3-գ, 4-դ, 5-բ
2) 1-զ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-ե
3) 1-ա, 2-գ, 3-զ, 4-դ, 5-բ
4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-զ, 5-դ

## Բ մակարդակ

**51** **Նշված պնդումներից ո՞րն է սխալ:**

1) Մինչև Ք.ա. III հազարամյակի սկիզբը Միջագետքը քաղաքական առումով միավորված չէր:
2) Եգիպտոսի առաջին պետականությունները ձևավորվեցին խոշոր բնակավայրերի հիմքի վրա, որոնք կոչվում էին նոմեր:
3) Երկու Եգիպտոսները միավորող փարավոն Մինան կառուցեց նոր մայրաքաղաք Թեբեն:
4) Երկրագործությունը Միջագետքում սկզբնավորվել է դեռևս Ք.ա. IX հազարամյակում:

**52** **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) Բյուզանդիայից խլված տարածքները մտան նորաստեղծ Լատինական կայսրության մեջ:
2) Խաչակրաց երրորդ արշավանքի ընթացքում Ֆրասիայի թագավոր Ֆիլիպ II Օգոստոսը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում:
3) Արևելքում ստեղծված երեք հոգևոր-ասպետական միաբանությունները ենթարկվում էին Երուսաղեմի թագավորին:
4) Երկրորդ խաչակրաց արշավանքը գլխավորում էին Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասիրտը և Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ I Շիկամորուսը:

**53** **Նշված պնդումներից ո՞րն է սխալ:**

1) 2002թ. մայիսի 14-ին որոշվեց ՀԱՊ-ը վերածել լիարժեք միջազգային կազմակերպության:
2) 1990թ. հունիսի 12-ին ընդունվեց Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագիրը:
3) 1991թ. նոյեմբերի 15-ին ԽՍՀՄ-ի Պետական խորհուրդը հաստատեց ԽՍՀՄ-ի փոխարեն Ինքնիշխան Պետությունների Միության ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագիծը:
4) 1991թ. դեկտեմբերի 8-ին ստորագրվեց Բելովեժսկի համաձայնագիրը:

**54** **Ի՞նչ է նշանակում «լիթուրգիա»:**

1) «բողոքարկում»
2) «վարձատրություն»
3) «վիճակահանություն»
4) «ընծայաբերում»

**55** **Տվյալ հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

1. Ազատությունների մեծ հրովարտակ
2. մուլք
3. գիլդիական դպրոց
4. վեչե
5. Կորտեսներ

ա. եկեղեցու իրավասության ներքո գտնվող միջնադարյան դպրոց
բ. դասային ներկայացուցչական ժողովներ Իսպանիայում
գ. մասնավոր սեփականություն համարվող հողեր
դ. 63 հոդվածներից կազմված միջնադարյան Սահմանադրություն
ե. Ժողովրդական ժողով սլավոնական ցեղերի մոտ
զ. եկեղեցու իրավասությունից դուրս գտնվող միջնադարյան դպրոց

1) 1-զ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-դ
2) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ե, 5-բ
3) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-զ
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ, 5-զ

**56** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

1. գաղութ
2. դոմինիոն
3. մանդատ
4. դեկրետ

ա. Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների ընդունած օրենքների անվանում:
բ. Պատմության նոր և նորագույն շրջանում որևէ օտար պետության գերիշխանության ներքո գտնվող երկիր կամ տարածք, որը զրկված է քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունից:
գ. Կառավարման ձև, գաղութային կախվածության տարատեսակ, որն առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո:
դ. Մինչև 1947թ. Ազգերի բրիտանական համագործակցության անդամ երկրների անվանումը:
ե. Քաղաքական կամ տնտեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ:

1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-ե
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ
3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա

57 **Նշված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են փարավոն Մինայի կողմից միասնական պետության ստեղծման հետևանք:**

ա. Եգիպտոսի պատմության մեջ սկսվեց Նոր թագավորության դարաշրջանը:
բ.Նոմերի միջև պատերազմները դադարեցին, տնտեսությունը վերականգնվեց:
գ. Նեղոսի դելտայի շրջանում կառուցվեց նոր մայրաքաղաքը՝ Մեմֆիսը:
դ. Անցկացվեցին կրոնական բարեփոխումներ, որոնք սահմանափակում էին Ամոնի տաճարի քրմության իրավունքները;
ե. Կազմակերպվեցին առաջին ռազմական արշավանքները Լիբիա, Նուբիա և Սինայի թերակղզի:

1) բ, գ, ե
2) ա, գ, դ
3) բ, դ, ե
4) ա, բ, դ

58 **Նշվածներից որո՞նք են աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքներ:**

ա. Հայտնագործվեցին մինչ այդ անհայտ մայրցամաքներ, զարգացավ գիտությունը:
բ. Վերացվեց Օսմանյան կայսրությունը՝ որպես խոչընդոտ Հնդկաստան տանող ճանապարհին:
գ. Եվրոպայի կապերը Ասիայի, Աֆրիկայի ու Ամերիկայի հետ դարձան մշտական և բազմաբնույթ:
դ. Առաջացան առաջին եվրոպական գաղութները:
ե. Եվրոպայից նոր հայտնագործված երկրներ արտահանվեցին հսկայական նյութական հարստություն և արժեքներ:
զ. Եվրոպացիները կործանեցին մի շարք հին քաղաքակրթություններ, խափանեցին այդ երկրների և ժողովուրդների բնականոն զարգացումը:

1) բ, գ, դ, ե
2) բ, գ, ե, զ
3) ա, գ, դ, ե
4) ա, գ, դ, զ

59 **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Գերմանիայի ծավալապաշտական քաղաքականության պատճառ:**

ա. Միջազգային հանրության կողմից վճռական գործողությունների դիմելուն պատրաստ չլինելը:
բ. Կախյալ տարածքների կառավարման նոր՝ մանդատային համակարգի ստեղծումը:
գ. Գերմանիայից բխող վտանգի թերագնահատումը:
դ. Մի շարք երկրների անկախության վերացումը:
ե. Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից տարվող Գերմանիայի «խաղաղեցման» քաղաքականությունը:
զ. Միջազգային կազմակերպությունների և կառույցների լուծարումը խոշոր տերությունների կողմից:

1) ա, բ, դ
2) ա, գ, ե
3) բ, գ, դ
4) գ, ե, զ

**60** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա– կանությամբ:**

ա. Կինոսկեֆալեի ճակատամարտը
բ. Իսոսի ճակատամարտը
դ. Իսթմոսի ճակատամարտը Սպարտայի և Աքայան միության զորքերի միջև
գ. Աթենական նավատորմի արշավանքը Սիցիլիա
ե. Աթենքի «Երկար պարիսպների» քանդումը
զ. Պարսկական նավատորմի ջախջախումը Սալամինի կղզու մոտ
է. Պիլոս քաղաքի գրավումն աթենացի զորավար Դեմոսթենեսի կողմից
ը. Կորնթոսի համահունական վեհաժողովը
թ. Արբելայի ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների միջև
ժ. Քսերքսես I Աքեմենյանի սպանությունը

1) դ, գ, ա, ե, բ, ժ, զ, է, թ, ը
2) գ, ե, զ, ա, ժ, բ, է, թ, դ, ը
3) զ, ժ, է, գ, ե, ը, բ, թ, ա, դ
4) թ, ա, բ, դ, ե, գ, է, ժ, ը, զ

**61** **Աշխարհիկ և հոգևոր գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի:**

ա. Լևոն III
բ. Օտտոն I
գ. Լենկ Թեմուր
դ. Գրիգորիոս VII
ե. Վուլֆիլ
զ. Կոնրադ III
է. Ռիչարդ I Առյուծասիրտ
ը. Ֆիլիպ IV Գեղեցիկ
թ. Կարլոս Մարտել
ժ. Քլոդվիգ

1) բ, ա, ժ, ե, թ, դ, զ, է, գ, ը
2) ե, ժ, թ, ա, բ, դ, զ, է, ը, գ
3) ժ, դ, ե, զ, է, թ, ը, ա, գ, բ
4) թ, ա, բ, ե, դ, ժ, գ, զ, ը, է

**62** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա– կանությամբ:**

ա. Սայքսի և Պիկոյի գաղտնի համաձայնագիրը
բ. Երրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
գ. Վիեննայի վեհաժողովի ավարտը
դ. Ռուսաստանի Հայրենական պատերազմը
ե. Վուդրո Վիլսոնի նախագահ ընտրվելը
զ. Հանրապետական կուսակցության ստեղծումը ԱՄՆ-ում
է. Օսմանյան բանակի ենիչերիական ստորաբաժանումների վերացումը
ը. Բալկանյան երկրորդ պատերազմի սկիզբը
թ. ԱՄՆ-ի առաջին աշխարհամարտին մասնակցության սկիզբը
ժ. Ավստրո-Հունգարիայի ստեղծման մասին համաձայնագիրը

1) է, դ, ժ, բ, ա, զ, գ, թ, ը, ե
2) գ, դ, ա, ե, բ, է, զ, ը, թ, ժ
3) դ, գ, է, զ, ժ, բ, ե, ը, ա, թ
4) ը, ա, գ, զ, դ, ե, ժ, բ, թ, է

**63** **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Իրավարար վճռի սահմանափակումը Հաշտության պայմանագրի 89-րդ հոդվածում նշված չորս նահանգներով կարծես պարտավորեցնում ու պարտադրում է…»:**

1) Հ. Թրումանը
2) Թ. Ռուզվելտը
3) Շ. Դը Գոլը
4) Վ. Վիլսոնը

**64** **Ո՞ր փաստաթղթից է վերցված հետևյալ արտահայտությունը. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակն ու իրագործում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:**

1) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 15-րդ նստաշրջանում ընդունված 1514-րդ բանաձևից
2) Անկախ պետությունների համագործակցության կազմավորման վերաբերյալ պայմանագրից
3) Բեռլինի վեհաժողովում ընդունված բանաձևից
4) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 7-րդ նստաշրջանում ընդունված 637-րդ բանաձևից

65 **Կատարել համապատասխանեցում:**

1. Աթենքի գրավումը Քսերքսեսի կողմից
2. Մարաթոնի ճակատամարտը պարսկական և աթենական զորքերի միջև
3. Մակեդոնիայի արքա Փիլիպոս II-ի գահակալման սկիզբը
4. Պերիկլեսի առաջին ստրատեգոս ընտրվելը
5. սպարտացիների արշավանքը Հյուսիսային Հունաստանի պոլիսների դեմ

ա. Ք. ա. 443 թ.
բ. Ք. ա. 490 թ.
գ. Ք. ա. 424 թ.
դ. Ք.ա. 421 թ.
ե. Ք. ա. 359 թ.
զ. Ք. ա. 480 թ.

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-զ, 5-բ
2) 1-զ, 2-բ, 3-ե, 4-ա, 5-գ
3) 1-ե, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ա
4) 1-ա, 2-ե, 3-զ, 4-բ, 5-գ

66 **Կատարել համապատասխանեցում:**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Սրբազան հռոմեական(Գերմանական) կայսրության առաջացումը | 1. | 1206 թ. | 1. | Ալեքսանդր Նևսկի |
| 2. | Ալբիգոյան պատերազմների սկիզբը | 2. | 962 թ. | 2. | Օտտոն I |
| 3. | Առաջին համամոնղոլական դուրուլթայը | 3. | 1240 թ. | 3. | Չինգիզ խան |
| 4. | Շվեդների պարտությունը Նևայի մոտ | 4. | 1209 թ. | 4. | Ֆրիդրիխ I Շիկամորուս |
| | | 5. | 1242 թ. | 5. | Ինոկենտիոս III |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 4 | 5 |
| 4 | 2 | 3 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 4 |
| 2 | 1 | 5 |
| 3 | 2 | 2 |
| 4 | 4 | 1 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 5 | 4 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 3 | 5 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 2 |
| 2 | 4 | 5 |
| 3 | 1 | 3 |
| 4 | 3 | 1 |

**67** **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք տեղ են գտել Ք.ա. 197թ. Հռոմի և Մակեդոնիայի միջև կնքված պայմանագրում:**

ա. Հռոմը հրաժարվում էր Հունաստանի նկատմամբ ունեցած իր հավակնություններից:
բ. Մակեդոնիան պարտավորվում էր հրաժարվել իր բոլոր նվաճումներից:
գ. Հունական քաղաքները ճանաչում էին Մակեդոնիայի գերիշխանությունը և վճարելու էին 3000 տաղանդ ռազմատուգանք:
դ. Մակեդոնիան Հռոմին վճարելու էր 1000 տաղանդ ռազմատուգանք:
ե. Մակեդոնիայի արքա Փիլիպոս V-ը Հռոմին պետք է հանձներ նավատորմը, իսկ մակեդոնական բանակը կրճատեր մինչև 5000 զինվոր:
զ. Հռոմը ճանաչում էր Մակեդոնիայի նվաճումները Եգիպտոսի տիրույթներում:
է. Փիլիպոս V-ն առանց Հռոմի համաձայնության իրավունք չուներ պատերազմ սկսելու որևէ պետության դեմ:

1) բ, գ, ե, զ
2) ա, գ, դ, զ
3) բ, դ, ե, է
4) ա, գ, ե, է

**68** **Նշված պնդումներից որո՞նք են սխալ:**

ա. 1911-1912թթ. պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրությունից զավթած հյուսիսաֆրիկյան տարածքներում Իտալիան ստեղծեց Լիբիա գաղութը:
բ. 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով Ճապոնիային անցավ ողջ Սախալին կղզին:
գ. Բալկանյան թերակղզու և Լատինական Ամերիկայի պետությունները ձևավորվել են արդարացի պատերազմների արդյունքում:
դ. Մասնակցելով Առաջին աշխարհամարտին՝ Ֆրանսիան նպատակ էր հետապնդում զավթելու Շվեյցարիան և Բելգիան:
ե. Անգլիան Գերմանիային պատերազմ է հայտարարել 1914թ. օգոստոսի 1-ին:
զ. 1917թ. Անտանտի կողմից առաջին աշխարհամարտի մեջ մտան Լատինական Ամերիկայի 14 երկրներ:
է. 1917թ. բոլշևիկյան հեղաշրջման ընթացքում Ռուսաստանի 25 քաղաքներում իշխանությունը գրավվել է ուժի գործադրմամբ:
ը. Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանացիները քիմիական զենք գործադրեցին Իպր քաղաքի մոտ:

1) բ, դ, ե, է
2) ա, գ, զ, ը
3) գ, զ, է, ը
4) գ, դ, ե, զ

69 **Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. 2007թ. ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ նախագահի պաշտոնը ստանձնեց աֆրոամերիկացի Բ. Օբաման:
բ. 1954թ. ԱՄՆ-ի նախագահ Դ. Էյզենհաուերը դադարեցրեց «վհուկների որսը» երկրում:
գ. 1991թ. Մ. Թետչերին փոխարինեց չափավոր պահպանողական Ջ. Մեյջորը:
դ. 1966թ. Ֆրանսիան դուրս եկավ ՆԱՏՕ-ի ռազմական կառույցից:
ե. 2002թ. ֆրանսիական Սահմանադրությունում կատարված փոփոխության համաձայն՝ նախագահն ընտրվելու էր 5 տարի ժամկետով:
զ. ՄԱԿ-ի հիմնադիր կազմ մտան Հակահիտլերյան միության 51 անդամ երկրներ:
է. ՄԱԿ-ի Միջազգային դատարանն իր գործունեությունը սկսել է 1946թ.:

1) գ, դ, ե, զ
2) բ, դ, զ, է
3) ա, դ, գ, ե
4) բ, գ, ե, է

70 **Տալ տերմինների բացատրությունը:**

1. օստրակիզմ
2. տիրանիա
3. պրինցեպս
4. դոմինատ
5. դիադոխներ

ա. Կառավարման նոր համակարգ Հռոմի ուշ կայսրության դարաշրջանում
բ. Ալեքսանդր Մակեդոնացու տերության ժառանգորդներ
գ. միանձնյա կառավարման ժամանակավոր եղանակ Հին Հունաստանում
դ. Ժողովրդական ժողով Հին Աթենքում
ե. Պետության համար վտանգ ներկայացնող քաղաքացիների վտարման կարգ Ատտիկայում
զ. Օկտավիանոսի անունը ծերակուտականների նոր ցուցակում

1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-զ
2) 1-ե, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ա
3) 1-ե, 2-գ, 3-զ, 4-ա, 5-բ
4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-զ, 5-ե

**71** **Նշված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

1. բացարձակ միապետություն
2. պահպանողականություն
3. սահմանադրական միապետություն
4. «նոր ազգայնականություն»
5. ավտորիտար կառավարում

ա. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը
բ. XVII-XVIII դդ. հեղափոխության և լուսավորականության հակազդեցությամբ ձևավորված քաղաքական գաղափարախոսություն
գ. կառավարման ձև, երբ միապետի անձնական իշխանությունը ոչնչով չի սահմանափակվում
դ. կառավարման ձև, երբ հասարակությունը պետք է ենթարկվի պետության ղեկավարի կամքին
ե. ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների ծրագիրը
զ. կառավարման ձև, երբ սահմանափակվում են միապետի իշխանությունն ու իրավունքները

1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-զ
2) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ե, 5-դ
3) 1-գ, 2-զ, 3-բ, 4-ե, 5-ա
4) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-զ

**72** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

1. սուպրեմատիզմ
2. ֆուտուրիզմ
3. փոփ-արթ
4. հայտեք
5. ֆովիզմ

ա.1970-80-ական թթ. առաջացած հետմոդեռնիստական հոսանք ճարտարապետության մեջ
բ. վերացական արվեստի հոսանքներից, բնորոշ է երկրաչափական վերացականությունը
գ. ֆրանսիական գեղանկարչության հոսանք, առաջացել է XXդ. սկզբին
դ. արվեստի ավանգարդիստական հոսանքներից, ձևավորվել է Իտալիայում
ե. 1960-ական թթ. առաջացած ավանգարդիստական ուղղություն՝ որպես հակակշիռ ամերիկյան էքսպրեսիոնիզմի գաղափարներին
զ. փիլիսոփայության ուղղություն, առաջացել է Գերմանիայում

1) 1-գ, 2-ե, 3-զ, 4-դ, 5-ա
2) 1-զ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
3) 1-ա, 2-զ, 3-բ, 4-գ, 5-ե
4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա, 5-գ

73 **Նշվածներից որո՞նք են հանդիսանում Սոլոնի բարեփոխումների հետևանքներ:**

ա. Վերացվեց պարտային ստրկությունը:
բ. Ստեղծվեց Աթենական ծովային միությունը:
գ. Մտցվեց օստրակիզմի համակարգը:
դ. Քաղաքացիություն ստացան Աթենքում մշտապես բնակվող օտար պոլիսների ներկայացուցիչները:
ե. Ատտիկայում մտցվեց գույքային ցենզ, ինչը ծանր հարված հասցրեց տոհմատիրական կարգերին:
զ. Ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդը:
է. Կատարվեց դատական բարեփոխում, որի արդյունքում ստեղծվեց ատենակալների դատարանը:

1) ա, դ, զ, է
2) ա, բ, գ, զ
3) ա, դ, ե, է
4) բ, դ, ե, զ

74 **Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Վերսալյան պայմանագրի հետևանք:**

ա. Գերմանիան կորցրեց Էլզասն ու Լոթարինգիան:
բ. Սաարի ածխաավազանի շրջանը 10 տարով դրվեց միջազգային վերահսկողության տակ:
գ. Հռենոսի գոտին հայտարարվեց ապառազմականացված:
դ. Գերմանիան պարտավորվում էր փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:
ե. Գերմանիան կորցրեց իր տարածքի 1/5 մասը:
զ. Դանցիգը(Գդանսկ) ստացավ ազատ քաղաքի կարգավիճակ:
է. Գերմանիայի բանակը չպետք է գերազանցեր 150 հազարը:

1) ա, գ, դ, զ
2) ա, բ, գ, է
3) բ, դ, ե, զ
4) գ, դ, զ, է

**75** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա– կանությամբ:**

ա. Սարգոն II-ի խոշոր արշավանքն Ուրարտուի դեմ
բ. Բաբելոնի գրավումը Մուրսուլիս I-ի կողմից
գ. Աշուրում Աքքադական հարստության հաստատվելը
դ. Խեթական տերության հզորության դարաշրջանը
ե. Ասորեստանի նոր վերելքը Աշուրնածիրպալ II-ի օրոք
զ. Եգիպտոսի նվաճումը պարսիկների կողմից
է. համաեգիպտական XI հարստության հիմնադրումը Թեբեի փարավոնի կողմից
ը. Թիգլաթպալասար III-ի Բաբելոնի արքա հռչակվելը
թ. Թուդխալիաս II-ի գահակալության սկիզբը Խաթթիում
ժ. Թուկուլթի-Նինուրտա II-ի կողմից Բաբելոնի նվաճումը

1) թ, է, զ, գ, դ, բ, ը, ա, ժ, ե
2) գ, ա, է, թ, բ, ժ, դ, զ, ը, ե
3) է, գ, բ, թ, դ, ժ, ե, ը, ա, զ
4) բ, է, թ, գ, ժ, դ, զ, ը, ե, ա

**76** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա– կանությամբ:**

ա. Մյունխենի գործարքը
բ. Ճապոնիայի Ազգերի լիգայից դուրս գալը
գ. Սահմանադիր ժողովի ցրումը բոլշևիկների կողմից
դ. Ստալինգրադի ճակատամարտը
ե. Վաշինգտոնի խորհրդաժողովի աշխատանքների ավարտը
զ. Տնտեսական փոխօգնության խորհրդի ստեղծումը
է. Մեծ Բրիտանիայում լեյբորիստական կառավարության ձևավորումը Թ. Բլերի ղեկավարությամբ
ը. Ռուս-վրացական պատերազմը
թ. Վարշավյան պայմանագրի լուծարումը
ժ. Ն. Սարկոզիի Ֆրանսիայի նախագահ ընտրվելը

1) բ, գ, ա, թ, ժ, ե, ը, ժ, զ, է
2) դ, ա, գ, բ, զ, ե, թ, ժ, է, ը
3) ե, բ, գ, ա, դ, թ, է, ը, զ, ժ
4) գ, ե, բ, ա, դ, զ, թ, է, ժ, ը

77 **Կատարել համապատասխանեցում:**

| # | Իրադարձությունը | # | Գործիչը | # | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պայմանագրի կնքումը Հռոմի և Սելևկյանների միջև | 1. | Դիոկղետիանոս | 1. | Ք.հ. 476թ. |
| 2. | Պիլոս քաղաքի գրավումն աթենացիների կողմից | 2. | Ալեքսանդր Մակեդոնացի | 2. | Ք.ա. 188թ. |
| 3. | Դոմինատի սկիզբը | 3. | Դեմոսթենես | 3. | Ք.ա. 425թ. |
| 4. | Գրանիկոսի ճակատամարտը | 4. | Օդոակր | 4. | Ք.հ. 284թ. |
| 5. | Վերջին հռոմեական կայսեր գահընկեցությունը | 5. | Անտիոքոս III | 5. | Ք.ա. 334թ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 4 |
| 2 | 1 | 5 |
| 3 | 2 | 3 |
| 4 | 5 | 1 |
| 5 | 4 | 2 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 2 |
| 2 | 3 | 3 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 2 | 5 |
| 5 | 4 | 1 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 5 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 5 | 4 |
| 4 | 3 | 1 |
| 5 | 4 | 2 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 2 | 4 |
| 3 | 3 | 5 |
| 4 | 1 | 2 |
| 5 | 5 | 1 |

78 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակին:**

1. «Մարիա Մագդաղենացի»
2. «Ֆրանկների պատմությունը»
3. «Դեկամերոն»
4. «Վեներայի ծնունդը»
5. «Գոթերի պատմությունը»

ա. Ջովաննի Բոկաչչո
բ. Կասիոդոր
գ. Դոնաթելլո
դ. Գրիգորիոս Տուրացի
ե. Ս. Բոտիչելլի
զ. Ֆ. Բրունելեսկի

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-բ
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա, 5-զ
3) 1-ե, 2-զ, 3-բ, 4-գ, 5-դ
4) 1-զ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե

| 79 | **Կատարել համապատասխանեցում:** |
|---|---|

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Գործիչը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կարիբյան ճգնաժամը | 1. | 1974 թ. | 1. | Ու. Չերչիլ | 1. | Ֆուլտոն |
| 2. | Ուոթրգեյթյան գործը | 2. | 1982 թ. | 2. | Մ. Թետչեր | 2. | Կուբա |
| 3. | Սառը պատերազմի սկիզբը | 3. | 1962 թ. | 3. | Ջ. Քենեդի | 3. | Ատլանտյան օվկիանոս |
| 4. | Ֆոլկլենդյան պատերազմը | 4. | 1946 թ. | 4. | Ռ. Նիքսոն | 4. | Վաշինգտոն |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 4 |
| 2 | 1 | 2 | 3 |
| 3 | 2 | 1 | 1 |
| 4 | 4 | 3 | 2 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 3 |
| 2 | 1 | 2 | 2 |
| 3 | 4 | 3 | 1 |
| 4 | 3 | 1 | 4 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 3 | 2 |
| 2 | 1 | 4 | 4 |
| 3 | 4 | 1 | 1 |
| 4 | 2 | 2 | 3 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 2 |
| 2 | 1 | 4 | 4 |
| 3 | 4 | 2 | 1 |
| 4 | 3 | 1 | 3 |

| 80 | **Կատարել համապատասխանեցում:** |
|---|---|

1. Թրումանի ուղերձը ԱՄՆ-ի կոնգրեսին
2. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) վերաբերյալ պայմանագրի ստորագրումը
3. Բեռլինի պատի կառուցումը
4. Յալթայի խորհրդաժողովը
5. Ռ. Ռեյգանի ԱՄՆ-ի նախագահի պաշտոնում ընտրվելը
6. Ֆրանսիական սպայության ապստամբությունն Ալժիրում
7. Ուոթերգեյթյան գործը և նախագահ Նիքսոնի հրաժարականը

ա. 1961 թ.
բ. 1958 թ.
գ. 1947 թ.
դ. 1945 թ.
ե. 1974 թ.
զ. 1992 թ.
է. 1962 թ.
ը. 1980 թ.

1) 1-գ, 2-զ, 3-ա, 4-ը, 5-դ, 6-է, 7-բ
2) 1-գ, 2-ե, 3-զ, 4-դ, 5-ը, 6-է, 7-բ
3) 1-ե, 2-գ, 3-բ, 4-զ, 5-ա, 6-դ, 7-է
4) 1-գ, 2-զ, 3-ա, 4-դ, 5-ը, 6-բ, 7-ե